

**ԺԲ - ԺԳ ԴԱՐԵՐԻ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐԻ**  
**ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ**

**ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ**

*ԺԲ - ԺԳ դարերը պատմաքաղաքական մեծ յեղաբեկումների ժամանակաշրջան էր հայ ժողովրդի կեանքում: Այս շրջանում միջին հայերէնի գրական նորմաւորման համար նպաստաւոր պայմաններ էին ստեղծուել շնորհիւ կիլիկեան պետութեան գոյութեան: Գիտական ծաւալուն գրականութեան մէջ զանազան բնագաւառներին վերաբերող գրքերի թւում զգալի տեղ են զբաղեցնում նաեւ իրաւական բնոյթի երկերը՝ Գօշի «Գիրք դատաստանին», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» եւ նոյն հեղինակին վերագրուող «Անսիզ Անտիոքայ»-ը: Ժամանակագրական առումով սրանցից առաջինը Գօշի աշխատութիւնն է, հեղինակուած 1184-1193 թթ., երկրորդը Սպարապետի դատաստանագիրքը՝ 1265թ. եւ երրորդը՝ «Անսիզ Անտիոքայ»-ը, որի ստեղծման ստոյգ տարեթիւը յայտնի չէ:*

*Գօշի դատաստանագիրքը թէեւ պետական Օրէնսգիր ժողովի չկայացման պատճառով պաշտօնական Օրէնսգրքի կարգավիճակ չստացաւ, բայց եւ այնպէս լինելով ամբողջական եւ ժամանակի պահանջները լիովին բաւարարող գործ, երկար ժամանակ ծառայել է որպէս գործող Օրէնսգիրք: Այն ունի մի շարք խմբագրութիւններ /Պ. Թորոսեանի գնահատմամբ՝ Ա, Բ, Գ խմբագրութիւններ/: Բացի հայերէն խմբագրութիւններից յայտնի են նաեւ լատիներէն, լեհերէն, ղփչաղերէն եւ վրացերէն խմբագրական տարբերակները:*

Դատաստանագիրքը բաժանուած է երկու հիմնական մասի՝ «Եկեղեցական կանոնք» եւ «Աշխարհական Օրէնք», չհաշուած նախադրութիւնը /ներածական մաս/, որի գլուխներէց վերջինը ԺԱ-ն հեղինակի յիշատակարանն է «Յիշատակարան սակաւութեան» վերնագրով: Աշխատութեան բնագրում յօդուածներն անուանուած են տարբեր կերպ, աւելի յաճախ՝ դատաստան, այլեւ՝ մատ, գլուխ, վիճակ, դպրութիւն եւ դրութիւն: Իւրաքանչիւր յօդուած բաղկացած է երկու մասից. առաջին մասում նշուած է այն աղբիւրը, որից օգտուել է հեղինակը, եւ որ մէջ է բերուում որպէս կանոն բառացիօրէն, երկրորդ մասը հեղինակի սահմանումն է, որով նա աղբիւրի իրաւադրոյթը կա՛մ հաստատում է, կա՛մ փոփոխում, կա՛մ էլ լրացնում:

Եթէ Գօշի գործը ընդհանուր իրաւական բնոյթ ունի, ապա Սպարապետինը՝ կիլիկեան հայկական պետութեան պաշտօնական Օրէնսգիրքն է եղել, ըստ որում վերջինս էականօրէն չի տարբերուում Գօշի ուրուագծած կառուցուածքից եւ բովանդակութիւնից, անգամ դիտուում է նոյնի խմբագրութիւնը որոշ փոփոխութիւններով ու լրացումներով հանդերձ /Ն. Թորոսեան, խմբ. Գիրք Դատաստանի, ԼԵ/:

Սմբատն իր դատաստանագրքում օգտագործել է տասնեակ աղբիւրներ, որոնց շարքին են դասուում Մովսիսական օրէնքները, հայոց կանոնագիրքը, ասորական դատաստանագիրքը, հռոմէական օրէնքները՝ Յուստինիանոսի կողմէսը եւ հայկական իրաւական փաստական աւանդոյթը:

Այդ դատաստանագիրքը բաղկացած է եօթ բաժնից եւ ընդգրկում է 202 ընդարձակ յօդուած՝ «Օրէնք եւ կանոնք ընդհանրական եկեղեցականաց եւ աշխարհացոյց» ընդհանուր վերնագրով: Բաժինները վերնագրուած են հետեւեալ կերպ.

Առաջաբանութիւն /վասն թագաւորաց եւ որդոց նոցին/,

Ա. Ժառանգութիւն հայրենեաց,

Բ. Իրաւունք ծնաւդաց եւ որդոց,

Գ. Վասն գրաւերոց եւ այլ ցեղ ստացուածոց իրաւանց,

Դ. Իրաւունք վաճառականաց,

Ե. Վասն տիաթկերոյ,

Զ. Իրաւունք ծառութեան,

Է. Վասն վնասաց եւ գրկանաց վճարելոյ իրաւունք:

Սպարապետի իրաւաբանական աշխատութիւններից պահպանուել է նաեւ «Անսիգ Անտիոքայ»-ը, միւսը՝ «Անսիգ Երուսաղեմայ» վերնագրով մեզ չի հասել: Նախորդի համար բնօրինակ է ծառայել հին Ֆրանսերէն կանոնագիրքը, որն ի դէպ

այժմ ոչ մի տեղ չկայ եւ Սմբատի Թարգմանութիւնը փաստօրէն համազօր է բնագրին:

Դատաստանագիրքը բաղկացած է երկու մասից՝ «Անսիզ պարոնաց եւ լիճ ճորտերոյ» եւ «Անսիզ քաղաքականաց»: Առաջին մասն ընդգրկում է 17 գլուխ, երկրորդը՝ 21 գլուխ:

## Ա. ՀԻՆ ԲԱՌԵՐԻ ՎԵՐԱԽՄԱՍՏԱԽՈՐՈՒՄ

Նշուած դատաստանագրքերում բառերի մի մեծ խումբ գրաբարեան շրջանի համեմատ ունեցել է իմաստային տեղաշարժ: Սա պայմանաւորուած է բառիմաստի ընդլայնումով կամ նեղացումով: Այսպէս. գրք. բաժ բառն արձանագրել է բառիմաստի նեղացում՝ «մաքս», այսինքն՝ ստացել է աւելի նեղ տերմինային իմաստաւորում, քան գրաբարեան շրջանում: Դրան հակառակ, մի շարք բառեր ակնյայտօրէն ընդլայնել են իրենց գործառական ոլորտները. բաց բառը, որ գրաբարեան մատենագրութեան մէջ գործածուել է «խօսք» եւ մի շարք այլ նշանակութիւններով, այս աշխատութիւններում ունի «գործ, աշխատանք», շալակ բառն ստացել է «պարտականութիւն», դատել բառը՝ «չարաչար աշխատել», ծուխը՝ «ծխական համայնք», ցատիլը՝ «արժենալ», քըշտելը, որ ունեցել է «կտրել, կտրատել» իմաստը, ձեռք է բերել «հարուածել, զարկել, խփել», բարակը՝ «մանրամասն, ճշգրիտ»/նա կու հրամայէ թէ՛ աղէկ բարակ հետաքրքիր պիտի լինել. ՍՄԴ, 115/, կուշտը՝ «ըստ պատշաճի, հարկ եղած ձեւով»/նա ծեծեն կուշտ վասն կնոջն քաշնացն. ՍՄԴ, 97/:

Դրանց մի մասը իմաստափոխուել է նմանութեան զուգորդմամբ/հմմտ. շալակ → շալակ/, առանց խօսքիմասային փոխանցման, միւս մասն էլ շնորհիւ իմաստային տեղաշարժի արձանագրել է ակնյայտ խօսքիմասային փոխանցում/բարակ (ած.) → բարակ (մկբ.), կուշտ (ած.) → կուշտ (մկբ.) եւ այլն/:

Բառիմաստի ընդլայնմանը զուգահեռ որոշ բառեր էլ ստանում են բազմիմաստութիւն, այսինքն՝ հին իմաստների վրայ աւելանում են նորերը, ընդ որում բոլորն էլ կենսունակ են: Այսպէս. շալակի բառի հնչիւնափոխուած շալկի ձեւն արտայայտում է՝ 1. «որեւէ բան չալակն առնել», 2. «տանել, կրել որեւէ մի բան», 3. «ստանձնել որեւէ պարտականութիւն կամ պատասխանատուութիւն», 4. «ընդունել, վերցնել, առնել»/տե՛ս Ռ. Ղազարեան, «Իմաստափոխութիւնը միջին հայերէնում», Բե՛շ, 1995, թիւ 3, էջ 14-19/:

## Բ. ՀԱՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Ինչպէս յայտնի է, լեզուի զարգացման տարբեր փուլերում տեղի են ունենում բառապաշարի տարբեր շերտերի քանակական փոփոխութիւններ, որոնք պայմանաւորուած են իմաստով իրար յարաբերակից միաւորների նուազմամբ կամ հակառակը՝ աճով: Միջինհայերէնեան փուլում զգացւում է որոշ լեզուական ոճերի բառաշերտերի ընդգծուած աշխուժացում: Դա վերաբերում է նաեւ իրաւական բնոյթի երկերին:

Քննող իրաւագիտական աշխատութիւններում նկատուում է նախ եւ առաջ համանիշ բառերի անբունազօս գործածութիւն: Համանիշները կամ միաբնոյթ են, այսինքն՝ բառակազմական եւ ձեւակազմական տեսանկիւնից չեն տարբերակւում, այլեւ տարաբնոյթ: Նոյնպիսի տարբերակում կարելի է կատարել համանիշային շարքերում բնիկ եւ փոխառեալ անդամներ առանձնացնելու դէպքում, այսինքն՝ կան շարքեր, որոնք ներկայանում են լոկ փոխառեալ անդամներով եւ կան շարքեր, որոնք տարաբնոյթ են յիշուած տեսանկիւնից:

Ստորեւ թուարկւող դոմինանտը դնում ենք առաջին տեղում.

ակտար «հաշուետար», սրկրում «քարտուղար, գրագիր»  
 անտեղութիւն, աւտարութիւն, ստեղր/ել/ տնով տեղով լքել -  
 հեռանալ»  
 բանադրել, յեմո ընկնիլ «գործի անցնել, ազդեցութիւն ունենալ»  
 բանառած, խլոցֆ «գողօն»  
 բրվլէն «արտօնութիւն», աւդրած «արտօնուած. առանձնաշնորհ»  
 գանգատ, քալումը  
 գրաւ/կնել/, ըոխօն «գրաւ»  
 դաղ «կնիք. դրոշմ», սիգեղ «կնիք»  
 դարպաս «դատարան», հառնէգ «շարժական գոյք»  
 լալ, աղէկ  
 հայրենէփութիւն «հայրենադատութիւն», տուրտվել «մատնել. դաւաճանութեամբ յանձնել»  
 հաւատադիր, դոմետիկոս «դաւանաբան, հաւատադիր»  
 մորտ, պառիկոս, «ենթակայ ճորտ»  
 մեղկան, հիլայած «մեղադրեալ»  
 մսխել, խանծրիլ «վատնել, վաճառել»  
 մօտար, մոմիկոս «գրագիր»  
 շեպոնել, «հրել, բռնել», փրթումն «ազատ արձակել, բաց թողնել»

շմոր, «իրարանցում, ընդվզում», մոտել «ապստամբել, ըմբոստանալ»

պայլ, լիմ, պարոն, տուկ

պատգամասաց, դեմետրիտոս «պատգամաւոր», չաւուշ «պատգամաբեր»

սիգնայ «մարտական դրօշ», շուղ

վարձանք, տուայր «հարսանեկան նուէրներ»

ուղիղ, շիտակ

վիթ լիմի «ազատուել», չմոել «դատական պատասխանատուութիւնից ազատ մնալ»

օրէնք, անսիգ, տիպաւն, նաւմաւս

Առկայ են նաեւ որոշ թուով հականիշ բառեր, որոնք բոլորն էլ տարարմատ են եւ հիմնականում ընդգրկում են տերմինային միաւորներ: Դրանք կարելի է դիտել որպէս հակադրական հականիշներ.

|                      |                                                  |
|----------------------|--------------------------------------------------|
| անհուտ, «երկիւղալի»  | - աներկղ/ութիւն/                                 |
| բլայթել «դատ վարել»  | - ֆայլել «դատի մէջ տանուլ տալ»                   |
| դահ/լիմի/            | - մատղ/ցնել/                                     |
| հառնէգ «անշարժ գոյք» | - գումաշ «շարժական գոյք»                         |
| պարոն                | - մորտ                                           |
| պոճոյք «օժիտ»        | - մահր «ամուսնական նուէր»                        |
| ջաստել «պատժել»      | - չմոել «դատական պատասխանատուութիւնից ազատ մնալ» |
| տրփընդել «պաշտպանել» | - հիւլայել «մեղադրել»                            |

Համանունները այնքան էլ չատ չեն: Սրանց մէջ միակ համարմատ համանունը թերեւս չալակն է. միւսները տարարմատ են.

|                 |                           |
|-----------------|---------------------------|
| մագատ «աճուրդ»  | - մագատ «հակառակ. ներհակ» |
| շալակ «բեռ»     | - շալակ «պարտականութիւն»  |
| ջաստել «պատժել» | - ջաստել «ամրոց, դղեակ»   |

#### Գ. ՆՈՐԱՅԱՅՏ ԲԱՌԵՐ ԵՒ ՆՈՐԱԿՁՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Քննուող դատաստանադրքում հանդիպում են բաւականաչափ նորայայտ բառեր եւ նորակազմութիւններ: Նորակազմութիւնները երկու կարգի են. հնչիւնական՝ այն / = աճ/, բա-

բուրբ / = պարոյրք/, լուկ / = լոկ/, պեղծ / = պիղծ/տ/, սանդուխտ / = սանդուղ/, եւ ձեւակազմական՝ իսայ, իտայ /ցուցական դերանուններ/, չֆել /հմմտ. գրբ. չֆել/, աեուտ, ադուեմ, ամամել, անբախտ, անգայթակղ պահել, անձամձիչ «առանց ձանձրանալու», աջողվորութիւն, արտպան, գիշել, խիթալ, կապակ, կապնակ, յաւժարել, չֆաւորութիւն, սաստ դնել, ֆշտան, ֆուրվտի:

Նկատուում են որոշ թուով տերմինային գործառոյթի նորամուծութիւններ՝ անդիմադարձ, աներկեղութիւն, առջնորել «կանխապէս իմանալ», բերդտու, մարմնագեղծ:

Առկայ են բաւականաչափ նորայայտ բառեր, որոնք գրաբարեան մատենագրութեան մէջ որեւէ կերպ չեն արտացոլուել, թէեւ սրանց մի մասի համար կարելի է ենթադրել աւելի վաղ գործածութիւն: Այսպէս. ակուայ, անբախտ, անխելիլ, ամմուդ, աւրընթրիք, քարձրաթռիչ, քնաւորական, գիշերակոյր, դեղգին, լմննալ/լմնցնել, խանձական լինիլ, խելաթափ, խոգերամակ, կաննուխցնել, կիցք, հնակաղ, հնահազ, ձիատած, մախամք, մատղջցնել, յոն, մսխել, շոդսիրտ, չարագազան, չվան, պաղատ, պղերգութիւն, սալլել, վգնատիւն, տնկահատ, ցղրեղ դնել, փթրիլ, փրթումն:

Անհրաժեշտ ենք համարում մանրամասն անդրադառնալ այդ բառերից մի քանիսին.

Ախիրթութիւն «սանձարձակ, անզուսպ լինելը» - կազմուած է աղփուրթ հիմքից, որ թերեւս ունի օտար հիմք, բայց աղբիւրն անյայտ է: Միջինհայերէնեան աղբիւրներում առկայ է նաեւ աղփրթել բայաձեւը:

Բարուրբ այնել - նոյն բարուր ձեւով գործածուում է Ախալքալաքի, Երեւանի, Ղարաբաղի, Թիֆլիսի բարբառներում «խանձարուր» նշանակութեամբ: Արմատական բառարանը բերում է համանուն բարուր բառը՝ «սուտ պատճառ, պատրուակ» նշանակութեամբ, յիշատակում է սնոտիաբարուր բարդութիւնը, որն օգտագործուած է Գրիգոր Տղայի մօտ /ՀԱԲ, 1, 428/: Մեր համատեքստում ունի «ստով պարուրել» իմաստը. «Ապա թէ զմէկն սպաննէ ու զմէկն թողու, նա զէդ մարդասպան դատեն զինքն վասն զի կարէ ոք ստել զմարդ, եւ բարուրբ այնել որ խաբէ զինք իր կինն ու բերէ յիր տունն ածէ, եւ սպաննէ զինք /ՍՍԴ, 94»:

Կապնակ - գործածուում է նաեւ Համչէնի բարբառում «տասանորդ՝ որ կը տրուի ջաղացպանին իբր վարձ ցորենը աղալուն = գրբ. կապիճ «չինիկ» բառէն» /Գաւառական բառարան, էջ 551/: Սմբատի դատաստանագրքում համատեքստային գործա-

ծուծիւնը նոյն նշանակութիւնն է արձանագրում. «Եւ զկապ-  
մըկերն ըստ երկրին սահմանին այնեն, եւ ըստ քաղցացն եւ ըստ  
ջրին ուժոյն» /ՍՄԴ, 171/:

Շեպոննի - արձանագրուած է ՄՀԲ, 2, 214, «հրել, բռթել,  
մշտել» իմաստով, բայց ծագման կամ կազմութեան համար տե-  
ղեկութիւն չի տալիս: Հնարաւոր է հանգեցնել շեպ < պհլ. \*šēp  
«չեղ. զառիվայր» /հմմտ. պրսկ. šib «զառիվայր. խորդուբորդ»,  
աւ. xšvaepā- «ետեւը» /ՀԱԲ, 3, 510/: Կազմութեան համար թե-  
րեւս պէտք է հաւանական համարել շեպ-առնել «ետ չարտել. ցած  
գցել, գլորել», որ առընչւում է շպրտել բայի հետ: Մի շարք  
բարբառներում, մասնաւորապէս Երեւանի, Ղազախի բարբառ-  
ներում գործածւում է պարզ բայական շեպել ձեւը «խփել,  
զարնել» /տե՛ս Գաւառական բառարան, էջ 826/:

Սալլի - գործածւում է Մարաշի բարբառում «ձայնը կտրել»  
իմաստով, որ Աճառեանը արձանագրել է սալլի ձեւով /Գաւա-  
ռական բառարան, էջ 951/: ՄՀԲ-ն տալիս է «անփոյթ՝ անուշա-  
ղիւր լինել» իմաստային նշումը, որ սակայն համատեքստում  
հաստատում չի ստանում. «Եւ ինք իր սալլելովն վկայութիւն  
երես իր խոմին ...» /Անս., 29/: Սա թերեւս պէտք է դիտել փո-  
խառութիւն արաբերէնից, ուր առկայ է *salla* «լեզուն կտրել.  
լեզուն դուրս քաշել, պոկել»:

Փքրիլ - նախորդի նման ունի բարբառային գործածութիւն,  
մասնաւորապէս Երեւանի եւ Ղազախի բարբառներում /Գաւա-  
ռական բառարան, էջ 1069/ եւ ունի «փխրել, փշրուել»: Վկայ-  
ուած է նաեւ Արմատական բառարանում փքուր գլխաբառի տակ  
«մանր փշուր, մճիր, աւազ» նշանակութիւններով /4, էջ 500/:  
Նոյնի կրկնակ տարբերակն է նաեւ փշուր բառը, որ Զահուկ-  
եանը դիտում է խեթալուտական ներդրում /տե՛ս ՀԼՊ, 315/:  
ՄՀԲ-ն իմաստի համար նշում է «դուրս հոսել, թափուել» /2,  
417/, բայց համատեքստում այն արդարացում չի գտնում. «Նա  
թէ ընդ վատ լինելոյ կամ վատ թրծելոյ փքրի՝ նա վճարէ ծա-  
խաւոն գկարասի գինն եւ զգինոյն կէսն» /ՍՄԴ, 124/:

Փրքումն - գործածուած է նաեւ ՍՄԴ-ում «ազատ թողնելը,  
արձակելը» իմաստով: Յաճախական է մի քանի բարբառներում՝  
փրքիլ, փոտել, պրծնել, սպրդել ձեւերով /տե՛ս Գաւառական  
բառարան, էջ 1089/:

## Դ. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Տերմինային բառաչերտը բազմաբնոյթ է մի շարք առում-  
ներով: Նախ՝ տերմինների լեզուական աղբիւրը տարբերակուած

է. հայակականից զատ եւ նոյնիսկ առաւել յաճախութիւն ունեն  
օտար՝ լատիներէն, յունարէն, հին ֆրանսերէն, արաբերէն,  
պարսկերէն, թուրքերէն տերմինները: Երկրորդ՝ զգալի թիւ են  
կազմում նորաստեղծ տերմինները, որոնց բառակազմական բա-  
ղադրիչները զուտ հայկական կամ հնուց լեզուի մէջ արմատա-  
ցած օտար հիմքերի ծաւալումներ են: Դատաստանագրքերի տեր-  
մինաբանութիւնը, որքան էլ տարօրինակ թուայ, կարելի է ասել  
մեծ մասամբ դուրս է մղուել ժամանակակից տերմինա-գործա-  
ռական ոլորտներից եւ ստացել լոկ պատմական ունեցուածքի  
արժէք: Փոքրաթիւ այն տերմինները, որոնք արդի լեզուական  
այս կամ այն տարբերակում դեռեւս չարձանակում են գործառւել,  
հիմնականում պարսկական ծագման, թերեւս, խօսակցական  
ճանապարհով անցած փոխառեալ անուններ են՝ աք/բ/ա/ս/,  
ապահարգ/ել/, առեւանգ/ել/, գանկատ, դաղ «կնիք, դրոշմ»,  
դատստան, զնդան/ել/, խանդակ, խարն «ծախսեր», խիշտ «նի-  
զակ», կապալ, հալալ, հարամ, մարկ, մաղո, մօտար, չառուշ,  
պարոն, տրքստել /դրստել, դրուստ/:

Դատաստանագրքերի տերմինային բառապաշարը ունի շատ  
յստակ տարբերակուած բաշխում: Սրանց մէջ մեծ տարածում եւ  
գործածական յաճախութիւն ունեցող բառերը հէնց իրաւական  
տերմիններն են: Այսպէս.

այրկուքիւն, անայր, անբեկար, անընկմահ, անդատա-  
պարտ, անլտորդութիւն, անպարապութիւն, անսիգ «օրէնք»,  
անտեղութիւն, աշխարհաւարութիւն, ապահարգել, առեւանգ/ա-  
ռուգնայք, արձակապաշտան, աւդրել < հֆր. *otreier* «արտօ-  
նել», աւտարութիւն, աւրիմադրակից, բահր < պրսկ. *bahr*  
«փայ, շահաբաժին», բանադրել «գործադրել, ազդեցութիւն ու-  
նենալ», բանառած «գողօն. կողոպտած իր», բաւլաւն «ստերջ,  
ամուկ», բլայթել < հֆր. *plaidier* «դատ վարել. դատը պաշտ-  
պանել», բրվլէն < ֆր. *privilegé* «արտօնութիւն», գանկատ, գե-  
րետարութիւն, գրաւկնել, գումաշ < արաբ. *qumāš*, «չարժական  
գոյք», դաղ < պրսկ. *dāγ* «կնիք, դրոշմ», դատստնել, դարպաս  
«դատարան», դիաթէկ/տիաթիկ < յուն. *diadēke* «կտակ», դի-  
մախօսութիւն, դիմոս /դնել/ < ? «հարկատու դարձնել», երդ-  
մնող, զընդանել, ըռահ < պրսկ. ? «հասանելիք, բաժին», ըռ-  
գակ < արաբ. *arzāq* «ապրանք. ինչք», ըրըշֆաթն < պրսկ.  
*rošvat*, «կաշառք», ըրիմոն < արաբ. *rimun* «գրաւ», խիսմն <  
արաբ. *xasm* «դատի մէջ հակառակորդ», խոցֆ «գողացած ի-  
րեր», կահրայ < արաբ. *qahrā'* «բռնութիւն. ապստամբու-  
թիւն», կամաթ < արաբ. *qāma* «հաւասարագոր», կապալ <  
արաբ. *qabāl* «կապալ», կոթրու < թուրք. *gotürü* «առանց կշռե-

լու, միանուագ», կոփիչ, կրիտ < յուն. χριτης «քննիչ», հայ-  
րեմէփուոթիւն «հայրենադաւութիւն», հալալ «արդար. ազնիւ»  
< արաբ. halāl, հաւփ «հասոյթ», հարամ «ապօրինի» < արաբ  
harām նոյն նշ. հարամի «աւագակ» < արաբ. harāmi, հարկա-  
ւորիլ «թոյլատրել, արտօնել», հիլայիլ «ամբաստանել» < արաբ.  
hila, հրիտակ < յուն. hereditas «ժառանգութիւն», հողադրամ,  
հուրիլ «անարգել» < արաբ. haqir նոյն նշ., մեղկան «մեղա-  
ւոր. յանցաւոր», մեռելոյթֆ «մեռեալի թաղման ծախսեր», մեր-  
ձաւորիչ «սեռական զուգընկեր», մոտիլ «ապստամբել, ըմբոս-  
տանալ», յեմո ընկնիլ գործի անցնել» < արաբ. amr «գործ»,  
մաւմաւ «օրէնք» < յուն. νόμος նոյն նշ., մեհ < պրսկ. nerx  
«սակագին», մօտար < յուն. νοτάριος «գրագիր», մոփիկոս «նօ-  
տար», շալակ «պարտականութիւն», շմոր «խառնակութիւն,  
իրարանցում», չէֆչէֆ «կողմնակի, ապօրինի հարկ», չմոն  
«պատասխանատուութիւնից ազատ մնալ», պարսաւադէտ, պոխ-  
տիմոն < յուն. próstimon «տոկոսային տուգանք», պոոյֆ/գ  
«ժիտ, բաժինք», ջալունջ < հֆր. chalonge «բողոք, գանգատ»,  
ջաստիլ < հֆր. chastier «պատժել», սագայ տալ/այնիլ «կալանք  
դնել. բռնազրաւել», սալիլ «ցուցմունք տալուց հրաժարուել»  
< արաբ. salla «լեզուն կտրել. պապանձել», սիմն «նիւթական  
փոխհատուցում», ստեգրիլ «տնով տեղով լքել, հեռանալ»,  
վարձանֆ, վարձելիֆ, տաեքիլ < արաբ. tahrir «ղատական  
պարտութիւն կրել», տրֆընդիլ < ֆր. defendre «պաշտպանել»,  
տիպօն < յուն. τύπον «կարգ. օրէնք», տիւմպաշի < պրսկ.  
divān baši «ղեկանապետ», տիւմցի «ղատաւոր» < պրսկ. divān  
«հիմքից», տուայր < ֆր. douaire «վարձանք, հարսանեկան  
նուէրներ», տուրտվիլ «մատնել. դաւաճանութեամբ յանձնել», ի  
վերա/ փնդոնիլ իրաւունքները վերականգնել», ֆաշանֆ «նախա-  
տինք. անպատուութիւն», ֆիթ < հֆր. quite «ազատ, զերծ. ան-  
մասն», ֆայյիլ < հֆր. faillir «ղատի մէջ պարտութիւն կրել»:

Վարչական տերմիններ. – բաժտուոն «մաքսատուն», բանտ-  
վաւ գործատու, վարձով գործ տուող», եղեմդիար < յուն.  
σελενταριος «կայսերական պալատի բարապան», եսկոպոտիարայ  
«պալատական պահակ» < լատ. exkubitor նոյն նշ., լաւաւոխաս  
«ծախու ապրանքի գինը» < յուն. λογαριασος «գումար. հաշիւ»,  
լիմ < հֆր. lige «վասալ, աւատառու», խանթիլ «ծախսել,  
մսխել», խաստ < արաբ. qist «մասնավճար», խարն < արաբ.  
xarj «ծախսեր», հաւնէգ < ֆր. harnais «չարժական գոյք», մա-  
գատ < արաբ. mazād «աճուրդ», մաիր < արաբ. mahir «ամուս-  
նական նուէրներ», մայրեմիֆ «մայրական ժառանգութիւն»,  
մամտատոր < լատ. mandator «հրահանգիչ», մարգիգ < ֆր.

marchis «մարկիզ. ազնուական տիտղոս», մուխթասիպ < արաբ. muhtasib «հսկիչ. վերակացու», մադտ < արաբ. naqd «կանխիկ, առձեռն /դրամ/», շաւուշ < թուրք. çavuş «պատուիրակ», պայլ < հֆր. bail «մեծ իշխան. ասպետի փոխանորդ, պաշտանակից», պառիկոս < յուն. pároikos «տիրոջ ենթակայ, հարկատու ճորտ», պատգամասաց, պարոն < հֆր. baron «մեծաւոր, իշխանաւոր, ազնուական կալուածատէր», պրոպատիկէ < յուն. Πρωτο-Πατριχος «մեծ եւ առաջին պատրիկ», ջամբո < ֆր. chambre «սենեակ. այստեղ գանձատուն», ռեֆիմար < լատ. recitator /?/ «զեկուցագիր կարդացող», սերեֆիկ < արաբ. sarrafi «դրամափոխ, սեղանաւոր», սիգեղ < լատ. sigillum «կնիք, հրամանագիր», սիմաւո < յուն. synoros «սահման, սահմանագիծ», ստրատորոս < յուն. strator «ձիապան. արողապան», սըրկբուլ/f/ < յուն. σερβωνες «թիկնապահ. այստեղ քարտուղար, գրագիր», վեմետոր «բաղնեպան» < լատ. balneator «բաղնիսպան», վեստիտոր «թագադիր» < լատ. vestitor նոյն նշ., տուկ < ֆր. duc «աւատատէր իշխան, դուքս», տոիգլիմար < լատ. trichlinarcha «թագաւորական պալատի սեղանապետ», տրլստել «կարգաւորել. կանոնաւորել» < պրսկ. durust նոյն նշ., տֆթար < արաբ. daftar «այստեղ հաշուեմատեան», փղակոն < յուն. filagēs «գիշերապահ, հսկող»:

Եկեղեցական տերմիններ. - արաս «վանական» < յուն. αββας նոյն նշ., անագամոս «եկեղեցական կարդացող» < յուն. αναγινωτης «ընթերցող», աստուածածախ «աստծուն ուրացած», բուտ «հոգեւոր տեսուչ» < ասոր. bud «հոգեւոր տեսուչ, վերակացու», գոքոյայ «սաղմոսների շարք» < լատ. copulus «գոյգ». լատ. copula «սաղմոսների շարք», դիտապետութիւն եպիսկոպոսական հովուութիւն», դեկամիոն «հոգեւոր առաջնորդ. վանահայր» < յուն. dekaniōn նոյն նշ., դոմետիկոս «հաւատադիր, դաւանաբան» < յուն. dogmatikos նոյն նշ., եկլիսիայ «եկեղեցի» < յուն. ekklēsia նոյն նշ., եմիփորոն «խաչերով զարդարուած երկար եւ լայն ուրար» < յուն. òmofóron նոյն նշ., եոիսուն «քահանայ» < յուն. ierefs «երէց», զենմունք, զիտաո «սուտ արեղայ» < յուն. sikarios «կեղծ՝ սուտ արեղայ», ժամահարձակ «եկեղեցական ժամերգութիւն», իաչահան, կցրդասաց «սաղմոսերգու», հաւատադիր «դաւանաբան, հաւատի համար վկայութիւն տուող», միդր «եկեղեցական խոյր» < յուն. mitra նոյն նշ., շոդիաց «մատաղի հաց», պերիտուտ «հոգեւոր տեսուչ» < ?, ջանուն «մայր տաճարի քահանայ, < ֆր. chanoine նոյն նշ., վադեր «թագ», րաբոււնապետ «կրօնական առաջնորդ, վարդապետ», փիրիսկոպոս «եպիսկոպոսի փոխանորդ, քորեպիսկոպոս» < յուն. peiriskopos նոյն նշ.:

Ռազմական տերմիններ. - գաղտագեմ «զգեստի տակ թաքցրած զէնք», խանդակ < արաբ. xandaq «խրամատ», խիշտ < պրսկ. xišt «նիզակ», կանտիտորայ «թագաւորի զինակիր» < յուն. kandidátos նոյն նշ., կոպադ «զինուորականի շղթայ, գօտի» < լատ. copula նոյն նշ., շուդ «մարտական դրօշ», պոոֆ-սետորայ «երկաթէ վահան կրող պալատական պաշտօնեայ» < յուն. prosecutores նոյն նշ., պրացալ «բազկի զրահ» < լատ. brazalis նոյն նշ., սիգմայ/ֆ «մարտական դրօշ» < լատ. signa հգ. թիւ signum-ի նոյն նշ., սիլահ «զէնք» < արաբ. silāh նոյն նշ., սպախտար «սուսերով զինուած սուսերակիր» < յուն. spatários նոյն նշ., սդարել «պաշարել» < արաբ. qasr «բերդ, ամրոց» հիմքից, սֆոդար «պահակախմբի զինուոր» < յուն. skolários նոյն նշ.:

Երկրաչափական տերմիններ եւ չափի միաւորների անուանումներ. - դանգ «ունեցուածքի 1/6 մասը, < պհլ. dāng նոյն նշ., դեկան «արծաթէ կամ ոսկէ դրամ» < պհլ. dahekan նոյն նշ., երիւֆ «եռանկիւնի», երկակաւն, քաւու «1/4 դանգ արժողութեամբ դրամ» < tasu «չորս գլխարկի կշիռ», կմբրաւոր «կումբի ձեւ ունեցող, ուռուցիկ», մարկ «եւրոպական արծաթէ դրամ», մթխալ «մի կշռաչափ» < արաբ. mitxāl, պերպեւատ «բիւզանդական ոսկեդրամ» < արաբ. barbarat նոյն նշ., չարեկ «ամբողջի 1/4 մասը», սուրի «սիրիական դրամական միաւոր», սոլ «ոսկէ մետաղադրամ» < հֆր. sol «ոսկուց կտրուած մետաղադրամ»:

## Ե. ՈՉ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոչ տերմինային փոխառութիւնները գլխաւորապէս բաշխւում են առօրեական-կենցաղային ոլորտների վրայ: Բնականաբար, սրանց կենսունակութիւնը եւ արդի խօսակցական տարբերակներում գործածելիութեան տեսակարար կշիռը աւելի մեծ է: Նման փոխառութիւնների են՝ ամա «բայց», աիլ/այլ «առատ, թերութիւն», բազար, դարպալ /դռք/ «հարուած. անգամ», խալատ /ղալաթ/ «սխալ. վրիպակ», խար/կ/ել «կնքել, դրոշմել», խրատ, պախրէ, տրեխ, փոշիման, ֆլան «այսինչ»:

Դատաստանագրքերի ոչ տերմինային փոխառութիւնների իմաստային խմբերը բաշխւում են հետեւեալ կերպ.

1. Կեցիւններ. - ըոֆեպդար «ձիապան» < պրսկ. rikābdar նոյն նշ., իկտիշ «կռտած ձի» < թրք. igdiš նոյն նշ., պախրէ < արաբ. baqara «ցուլ, կով»:

2. Մարմնի մասեր. - խասապ «թոք» < արաբ. qasab նոյն նշ. .

3. Հագուստ. անձնական զարդարանքի եւ խնամք. - խարել «դաղել. խարան դնել» < պրսկ. Կāḏ նոյն նշ., պացին «կոնք. թաս» < ֆր. bassine նոյն նշ., սատր «երեսսրբիչ» < պրսկ. satr նոյն նշ., տրեխ < արաբ. tirāq «ոտնաման».

4. Բուսականութիւն. - մահլապ «չշի ծառի պտուղը» < արաբ. mahlab նոյն նշ., մագտաֆի «հերձի ծառի խէժը» < արաբ. mastika նոյն նշ. .

5. Շարժում. տեղափոխութիւն, փոխադրում. - դարպայ «հարուած. անգամ» < արաբ. darba նոյն նշ., դեհիդեհ «տեղից տեղ. տեղ-տեղ» < պրսկ. dih-i-dih նոյն նշ., դուալ < ֆր. double «կրկնակի. անգամ. պատիկ», քտալիր/քդրիր առնել «հնար գտնել» < արաբ. tadbir նոյն նշ., կանդարայ «կամուրջ» < արաբ. qantara նոյն նշ. .

6. Ունեցումով եւ սեփականութիւն. առեւտուր. - քազար/պազար < պրսկ. bāzār «չուկայ», գեհ «ոչխարի հօտ» < պրսկ. geh նոյն նշ., յալթ «պիտոյք. գործիք» < արաբ. ālat նոյն նշ. .

7. Զգայական ընկալումներ. - ալանի «ակնյայտ, բացայայտ» < արաբ. ālani նոյն նշ., անխալապայ «խաղաղ» < արաբ. qalaba հիմքից, դահ «հին, անպէտք» < պրսկ. dāh նոյն նշ., ըռատակն < պրսկ. rad «մեծահոգի, առատաձեռն» ըռովկիլ < արաբ. rifāq «հանգիստ. բաւականութիւն», խալապայ, խալապարար «կռուարար» < արաբ. qalaba նոյն նշ., խալատ < արաբ. ʿalat /հմտ. խալտինք հգ. ձեւ խալատ-ի/, խալսել < արաբ. xalas «մաքրել. զտել. յղկել» սագել /սայգուիլ/ < պրսկ. sâz(idan) «պատշաճել. հարմար դալ», հարուն «կամակոր. անհնազանդ» < արաբ. harūn նոյն նշ., մուխատրայ «վտանգաւոր» < արաբ. muxatira նոյն նշ. .

8. զգացմունք. բարոյական ըմբռնումներ. - աիպ/այպ «առատ. թերութիւն» < արաբ. ʿaib նոյն նշ., իրատ «խորհուրդ» < պրսկ. xirad նոյն նշ., փոշիման /փաշմանել/ «զղջալ. զղջում» < պրսկ. pʿašimān նոյն նշ. .

9. Խօսք. ընթերցանութիւն, գիր. - ավաջ «երգ» < պրսկ. āvāj/z «երգ».

10. Տարածական եւ հասրակական քաժանումներ. - խուխայ «խառնամբոխ» < արաբ. ʿaḥḥā նոյն նշ. .

11. սպասարկու քառեր. - ամա < պրսկ. amā «բայց», քահրակ < պրսկ. bahrak «մանաւանդ», ֆլան «այսինչ» < արաբ. fulān նոյն նշ. .

## Ձ. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քննուող դատաստանգրքերը որպէս միջին գրական լեզուի փաստացի նմոշներ, աչքի են ընկնում բառակազմական բազմապիսի կաղապարներով: Դա վերաբերում է յատկապէս բառաբարդմանը, առանց որի անհնար կը լինէին բազմաբնոյթ տերմինաբանական կաղապարների ստեղծումը եւ գործառութիւնը: Բարդութիւնների մէջ յօդակապով եւ անյօդակապ ձեւերի բաշխումը շատ չի տարբերւում:

արտպան  
բաժտուն  
բերդտու  
դեղգին  
խոզերամակ  
կցրդասաց  
շողհաց  
շողսիրտ  
պատգամասաց  
ուժիործուկ

աստուածածախ  
արձակապաշտան  
աւրինադրակից  
բարձրաթռիչ  
գաղտազէն  
գիշերակոյր  
երկակաւն  
ժամահարձակ  
խաչահան  
խելաթափ  
հաւատադիր  
հնակաղ  
հնահազ  
հողադրամ  
մարմնագեղծ  
չարագազան  
պաշտանակից  
պարսաւադէտ  
տնկահատ  
րաբունապետ

Ածանցումը պահպանում է հայոց լեզուին բնորոշ ընդհանուր պատկերը. վերջածանցաւոր բառերը անհամեմատ գերազանցում են նախածանցաւորներին: Նկատելի է, որ ածանցաւոր բառերը եւս օժտուած են որոշակի գործառական ծանրաբեռնուածութեամբ, յատկապէս տերմինային գործառոյթով:

ան— անբախտ, անբեկար, անգայթակղ, անդատապարտ, անդիմադարձ, աներկեղութիւն, անընկմահ, անլսորդութիւն, անխելիլ, անմուղ, անպարապուծութիւն, անպղերգաբար, անտեղութիւն  
—ակ կապճակ

|              |                                                                                                                                                                 |
|--------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| -ան/ք/       | վարձանք, քաշանք, քըշտան                                                                                                                                         |
| -/ա/կան      | բնաւորական, խանծական, մեղկան                                                                                                                                    |
| -իչ          | անձանձիչ, կռիիչ, մերձաւորիչ                                                                                                                                     |
| -իք          | մայրենիք, վարձելիք                                                                                                                                              |
| -ոյթ/ք/      | մեռելոյթք                                                                                                                                                       |
| -ոց/ք/, անոց | աւրկանոց, խլոցք                                                                                                                                                 |
| -ութիւն      | ախիրթութիւն, աջողվորութիւն, այրկութիւն,<br>աշխարհաւարութիւն, աւտարութիւն, գերէ-<br>տարութիւն, դիմախօսութիւն, դիտապետու-<br>թիւն, հայրենէթիւութիւն, չքաւորութիւն |
| -ում/ն/      | փրթումն                                                                                                                                                         |
| -ուն/ք/      | աղուն, զենմունք                                                                                                                                                 |
| -ուտ         | ահուտ                                                                                                                                                           |

ԱՐՄԷՆ ՄՈՒՇԵԳԼԵԱՆ

### Summary

#### A Lexicon Survey of XII-XIII Centuries Armenian Juridical Manuals

Armen H. Musheghian

The article examines the lexicon of Armenian juridical manuals of the 12-13-th centuries in several views: Semantic, terminological, as well as, word-building. The semantic study in a detailed way outlines semantic changes of inherited Classical Armenian words. The latter concern either a semantic broadening or a narrowness, through which some words get a terminological value too. The homonymic terms are not of great amount, while the synonyms and antonyms provide a considerable increase due to the abundance of the members in the series under discussion. A numerous amount of neologisms and innovations occurs in each manual. They are of two kinds: Morphological and word-building. The terminology involved concerns both the original Armenian terms, as well as loans. The terminological groups are the following: Juridical, administrative, religious, military, as well as, geometric and measurements names.